

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳՏԱՏՈՒՄԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՏՈՒՆԵՐԷՆ
ՆԵՐՍ. զրեց՝ Արքայական պալատ, Առաջնորդ
Հայոց Հալէպի. տպ. Ա. Տէր-Սահակեան. Հալէպ. 1937.

Փոքրագիր գրքոյի մ'է, 140 էջնոց, ուր Ար-
տաւագը Սրբազան հաւաքած է, «Ազդակ» և
«Եփրատ» լրագիրներուն մէջ լոյս տեսած իր
զանազան յօդուածները: Թէեւ վերնագիրը «ըն-
տանեկան դաստիարակութիւն» է, սակայն գրքի
պարունակութիւնը և նպատակն է, ցոյց տալ
ամուսնութեան դերը՝ ընտանեկան և ազգային
կեանքի պահպանումին մէջ: Ընտանիքը առաջին
կրթարանն է ուր ապագայ հայը, անհատը և
քրիստոնեան կը կազմուի. բայց ընտանիքի հիմը
ամուսնութիւնն է. որով կ'ուսումնասիրուի ա-
մուսնութիւնը՝ իբր խորհուրդ, խառն և համա-
րին ամուսնութիւնը, ծնողական իշխանութիւնը,
պարտաւորութիւնը, եւն:

«Ամուսնութեան խորհուրդը» յօդուածին մէջ՝
հակառակ որ հեղինակը կ'ընդհանրէ մ'է, ոչ մէկ
բացատրութիւն կու տայ այդ հաստատութեան
«խորհուրդ» ըլլալուն, անոր բնութեան և յատ-
կութիւններու մասին՝ ինչպէս որ է Աւետարանի
և Ս. Հայրերու վարդապետութեան մէջ:

Մեզի անհասկնալի կը մնայ թէ ինչպէս յար-
գելի հեղինակը փոխանակ խորհուրդի հարազատ
սրբազան և աստուածային նշանակութեան՝ աշ-
խարհիկ խորթ իմաստ մը տուած է անոր, հե-
տեւաւ տարտամ արտայայտութեամբ. «Խոր-
հուրդ է կոչուած, կ'ըսէ, ճիշդ այն պատճառաւ՝
որ երկու իրարու նախապէս անծանօթ, ապա նշա-
նի օրհնութեամբ գիրար ճանչցած երիտասարդ մը
և երիտասարդուհի մը սուրբ պսակի օրհնութեամբ
այնպէս կը միանան իրարու հետ՝ սուրբ սիրով՝
որ ոչ իսկ քոյր և եղբայր կամ երկու քոյր կամ
երկու եղբայր կրնան այդքան իրարու հետ սիրով
միաբանիլ, նուիրմամբ և անձնագոհութեամբ:
Եւ իսկապէս որ մարդկային միտքը շատ դժուա-
րութիւն կը կրէ ըմբռնելու համար այս եղածը
ամուսնական միութեան մէջ» (էջ 52):

Ամէն իրական և ճշմարիտ ամուսնութիւն այս
նկարագրուածին պէս է. ըլլայ ան յունաց կամ
հռոմայեցոց, հրէից կամ մահմետականներու
քով. առանց սակայն խորհուրդ մ'ըլլալու: Ասի-
կա քրիստոնէական խորհուրդ չէ, այլ բանաս-
տեղծական:

Սրբազանին «խորհուրդ» յօդուածին մէջ տի-
րող գաղափարը մինչդեռ այս է. ամուսնութիւնը
անհրաժեշտութիւն մ'է, և բոլոր երիտասարդ-
ները պէտք են ամուսնանալ: Ասիկա կը պա-

հանջէ ազգասիրութիւնը. բոլոր ժողովուրդնե-
րու դարաւոր կեանքը նոյն բանը կը հաստատէ:
Համառօտիւ կը քննուի նախապատմական շրջ-
շանք, չինական, հրէական, մահմետական և մին-
չեւ իսկ ներկայ իտալական կազմակերպութիւնը,
ուր ամուսնութիւնը և ընտանիքը կը քաջալերուի
և հաստատուն հիմերու վրայ կը կառուցուի:

Գուցէ «Բազմավէպ» ի ընթերցողը հետաքր-
քուի գիտնալու համար թէ՝ Սրբազանը անհրա-
ժեշտ կը համարի ամուսնութիւնը նաեւ կ'ընդ-
կաններուն համար, թէ ոչ:

Յստակ ոչ մէկ բացատրութիւն չունի այս մա-
սին. բայց քանի մը անորոշ և ընդհանուր տո-
ղերէն դատելով՝ աւելի պահպանողական և կու-
սակրօնութեան նպատակաւ կը թուի կարծես
երբ կը նոյնացնէ զաւակներու ծնունդին հետ
«մօթի այն արարչագործութիւնը, որ զանազան
երեւոյթներով ի սպաս կը դրուի դարձեալ միեւ-
նոյն հայրենիքին, անոր գոյութեան... համար:
Այս ճշմարտութիւնը քիչ մը ընդհանուր է բոլոր
ստեղծագործ միտքերու համար» (էջ 34):

Շատ իրաւացի են Սրբազանին խրատները
«խառն» և «համարին» ամուսնութեանց մասին:
Զարմանալի է սակայն որ այդ գեղեցիկ և լուրջ
էջերու մէջ չեն պակսիր նաեւ մութ և տգիտա-
կան դարերէ դեռ հայ ուսման մէջ մնացած
կարծիքներ արթնցնող տողեր ալ:

Երբ օտարներու (Ֆրանսացի, Մարոնի, Ասո-
րի, եւն) կարգին կը յիշուին նաեւ Կարողիկները,
ըսել է թէ կրօնքը շփոթուած է ազգին հետ:
«Հայ աղջիկներ շատ լաւ մայրեր եղած են ու
բարի ու հաւատարիմ ամուսիններ օտար և ընդ-
հանրապէս Կարողիկ տոհմերու մէջ. բայց ի
սպառ կորսուած են» (էջ 45): Անշուշտ Սրբա-
զանին ալ ծանօթ ըլլալու են ժողովրդական երգի
սա տողերը. «Հայոց աղջիկներ – Կաթողիկ ման-
չեր – ամէն տեղ շատ կան»:

Եւ որպէս զի չկարծուի որ կը չափազանցենք
Սրբազան հեղինակին խօսքերը՝ և այդ կաթո-
լիկներն ալ հայ չեն այլ օտար, բանանք գրքին
էջ 50, ուր դեռ աւելի յստակ բացատրուած
է. «Այս ֆրանսական և աղետալի ամուսնու-
թիւնը (համարին) Կաթողիկներու մէջ քա-
ջալերութիւն գտած է կրօնական բրօքականութի
համար ալ: Երբ Կաթողիկ չեղող հասարակու-
թեան մը պատկանող երիտասարդ մը սիրահա-
րութեամբ ուզէ կնութեան առնել իր մօտիկ մէկ
ազգականը, ու դիմէ իր պատկանած եկեղեց-
ւոյն, զոր օրինակ Հայ Եկեղեցւոյն, ու իր քա-
հանան ու Առաջնորդը մերժեն արտօնել նման

մեղօք ամուսնութիւն մը, անդին Հայ կաթողիկ
եկեղեցին պատրաստ է իսկոյն... պսակելու»:

Յարգելի Սրբազանը փոխանակ դարերով տեսող
կրօնական կռիւներու արձագանգ ըլլալու, լա-
ւագոյն բան մ'ըրած կ'ըլլար խրատական մ'ալ
ուղղելով իր այն Կարողիկ՝ Հայ եղբայրներուն,
որոնք չեն զգար իրենց ազգային կրթութեան,
լեզուի և մշակոյթի յարգը: Կրնար անոնց և
բոլոր Հայութեան ցոյց տալ կրօնքի և ազգի
գաղափարներու յստակ ըմբռնումին և համազ-
գային եղբայրակցութեան լաւագոյն օրինակներ
և ազդու դասեր որ չեն պակսիր կաթողիկէ հա-
յերու քով ալ:

Կարելի չէ այսչափ զարգացած և ազգասէր
եկեղեցականի մը մէջ յետին մտքեր ենթադրել.
գուցէ կաթողիկէ եկեղեցւոյ կազմակերպութեան
և վարդապետութեան մասին իր անտեղեակ ըլ-
լալն է որ յարգելի Սրբազանը սխալ եզրակա-
ցութեանց կ'առաջնորդէ: Կաթողիկէներու մասին
տրուած բոլոր մեկնութիւնները մասնական պա-
րագաներ են և կամ սխալ: Բնական է թէ քանի մը
հազարնոց հօտէ մը ուզել 3-400 միլիոննոց կաթո-
ղիկէ եկեղեցին դատել ծիծաղական պիտի ըլլար:
Իրականութեան ծանօթանալու համար՝ կը բաւէ
աչք մը տալ Լատին Օրինագրքին, ուր պիտի
տեսնուի որ համարին ամուսնութիւնը ար-
գելք է ամուսնութեան. բայց բացարձակ ար-
գելքներու թիւին չըլլալով՝ մինչեւ երկրորդ աս-
տիճան խոտոր գծի վրայ՝ կարելի է բարձրագոյն
հեղինակութեան կողմէ թոյլ տալ, ինչպէս հայ
եկեղեցւոյ մէջ ալ:

Կաթողիկէ Եկեղեցւոյ Օրինագրքը ամէնուն
համար է և բարձրականութի ոչ մէկ ձգտում ունի:
Ներուի մեզ դիտել տալ Սրբազան հեղինակին՝
թէ ուղիղ դաստիարակութեան միջոց մը չէ ազ-
գային զգացումը քաջալերու համար չափազան-
ցաբար չեղեցողութեան դիմել, կամ ընդհանրացնել օտար
անհատներու կամ տեղւոյ վերագրելիք պակա-
սութիւնները՝ եթէ կան. ասոր հակառակ լռել
կամ չուզել տեսնել օտարին առաւելութիւն-
ները:

Ոչ մէկ եկեղեցի, ոչ մէկ դարու մէջ Կաթողիկէ
եկեղեցւոյ չափ խիստ կազմակերպութիւն մը
ունեցած է ամուսնութեան Ս. Խորհուրդին
նկատմամբ:

Արդար դրուատիք մը չէ Հայ եկեղեցւոյ «առա-
կաւարական նախանձելի դրութիւնը» (էջ 109)
և անոր հակառակ բռնապետական երեւոյթի
տակ ներկայացնել Կաթողիկէ եկեղեցին որ «իբ-
ձայնն ու հեղինակութիւնը կը պարտադրէ իր

կրօնական հզօր մականին տակ գտնուած բոլոր
երկրամասերու ժողովուրդեան»:

Մեր ճանչցած Քրիստոսի եկեղեցին նուիրա-
պետական է. զայն կառավարողը առաքեալ-
ներն են և անոնց յաջորդները և ոչ թէ առ-
միկը: Հարկ մը կ'ա՞յ հոս մատնանշել բոլոր
անտեղութիւններն ու ցաւալի հետեւանքները
կրօնական ուսման վարդապետութեան: Զեւք կրնար
ըմբռնել թէ ինչպէս նախանձելի կ'ըլլայ դրու-
թիւն մը և մտայնութիւն մը ուր ուսման բեր-
նին և մամուլին մէջ կը տրորուին կրօնքի սըր-
բութիւններ և կրօնականներ...:

Զափազանցութիւնները ոչ միայն անախորժ
են միշտ, այլ նաեւ հակազդեցութիւն մը կը ստեղ-
ծեն իրականութեան տեղեակ անձի մը մէջ. հարկ
չենք տեսնել Սրբազանին պնդելու այս կէտին
չուրջ: Ճշմարտութիւնը որչափ ալ դառն ըլլայ,
սակայն աւելի սիրելի է իր իրականութեան մէջ
քան թէ դիտումնաւոր երեւոյթներու տակ:

Եթէ վերը մատնանշուած տողերը ջնջուին
Արտաւագը Սրբազանի գրքոյէն, գաղափարի ոչ
մէկ կապ պիտի կորսուի, և «ընտանեկան դաս-
տիարակութիւնը» բոլոր հայ տոհմերէն ներս՝ ա-
ռանց կրօնքի խտրութեան, հաճոյքով պիտի մտնէ,
պիտի կարդացուի, և վստահ ենք թէ այն ատեն
իսկապէս պտղաբեր պիտի ըլլայ:

Հոգեւ

ՎԱՐԳԳԵՍ ԱՆՆՈՒՆԵԱՆ. – «Յովհաննէս Թումանեան»
Մարդ է Բանաստեղծը. – Բոստոն, 1936.

Ահա նոր հատոր մը, արժանի կենալու մեր
գրական գեղեցիկ կարգին:
Հեղինակը հանրածանօթ Ա. Ահարոնեանի որ-
դին է. իր գործին կազմութեան իբրեւ «արժա-
նահատաւ աղբիւր ծառայած է իր իսկ «սեփական
յիշողութիւնը», արդիւնք իր մտերիմ կենակ-
ցութեան և ականջալուր տեղեկութիւններուն
բանաստեղծին բերնէն:

Երկու մաս կը պարունակէ հատորը.
Ա. – Մարդը. – Բ. Բանաստեղծը:

Առաջին մասով կը գծէ Թումանեանի կեան-
քը համառօտ և հաճելի գլուխներու մէջ. ընթեր-
ցողը հետաքրքրութեան մէջ թողնով՝ յաջորդ
գլխուն պարունակութեան. յաջող ներդաշնակու-
թեամբ մը կը շղթայէ կեանքին զանազան դրուագ-
ները, մէջբերումներով Բանաստեղծին գրութեան
ինչ ինչ կտորներուն՝ որոնք կը լուսաբանեն գրու-
թիւնը: